



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում.....	4
2. Սակագնայի քաղաքականություն.....	10
3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ	17
4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ	20
5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ.....	23
6. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	25
7. Էլեկտրական էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում	26

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
 - սակագնային բաժին,
 - ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
 - տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
 - ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններին:

2011 թվականին կշարունակվեն **էներգետիկայի բնագավառի** կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացում պարբերաբար առաջացող խնդրահարույց հարցերը, 2010 թվականին հանձնաժողովը փոփոխություններ ու լրացումներ է կատարել էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում, որով ի թիվս այլ փոփոխությունների, կրճատվել ու հստակեցվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Միևնույն ժամանակ հանձնաժողովը միջազգային խորհրդատվական կազմակերպությունների աջակցությամբ սկսել է ԵՄ փորձի ուսումնասիրությունը վերականգնվող էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ընթացակարգերի կիրառման առումով: 2011 թվականին, հաշվի առնելով նշված ուսումնասիրության արդյունքները, հանձնաժողովը կշարունակի ՀՀ էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացը և լիցենզավորված անձանց գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի կատարելագործման աշխատանքները:

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, հանձնաժողովի իրավական ակտերի և լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում տույժերի կիրառման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, հանձնաժողովը մշակել է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է իրավախախտ լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառել նաև ֆինանսական բնույթի պատժամիջոցներ: Նշված նախագծի ընդունումից հետո համապատասխան փոփոխություն-

ներ կկատարվեն հանձնաժողովի ընդունած տույժերի կիրառման կարգում:

Սպառողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով հանձնաժողովը 2010 թվականին փոփոխություններ է կատարել էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում: Համաձայն կատարված փոփոխությունների՝ բնակիչները սպառած էլեկտրական էներգիայի կամ բնական գազի դիմաց վճարում կատարելիս յուրաքանչյուր ամիս կկարողանան տեսնել սպառողի անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքները, առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքների գրանցման օրը, հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի կամ բնական գազի քանակը և արժեքը, պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին ու վճարման ամսաթիվը: Կազմակերպությունների դեպքում՝ նրանց գրավոր պահանջի հիման վրա, մատակարարները պարտավոր կլինեն յուրաքանչյուր ամիս ծանուցել ինչպես բնակչության վճարման փաստաթղթերում, այնպես էլ տվյալ սպառողի կողմից հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի կամ բնական գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործվող այլ ցուցանիշների մասին: Ընդ որում, վերջիններս մատակարարից կարող են պահանջել ծանուցումը ներկայացնելու գրավոր կամ էլեկտրոնային փոստով: Ծանուցումը փոստով առաքելու պահանջի դեպքում մատուցված փոստային ծառայության համար կվճարի սպառողը, իսկ էլեկտրոնային փոստով ծանուցումը կիրականացվի անվճար: 2011 թվականին հանձնաժողովը կշարունակի հանրային ծառայությունների ոլորտի սպառողների իրազեկվածության բարձրացրացմանն ուղղված աշխատանքները:

Հաշվի առնելով, որ գազամատակարարման և օգտագործման կանոնները հաստատվել են 2005 թվականին, անհրաժեշտություն է առաջացել համալիր վերանայել գազամատակարարման ոլորտում սպառող-մատակարար հարաբերությունները՝ դրանք համապատասխանեցնելով ներկայումս համաշխարհային պրակտիկայում կիրառվող նոր մոտեցումներին: Այդ նպատակով հանձնաժողովը 2011 թվականին կուսումնասիրի համաշխարհային լավագույն փորձը և կձեռնարկի գազամատակարարման և օգտագործման նոր կանոնների մշակման աշխատանքները:

2011 թվականին կվերանայվեի նաև այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողների կատարած ծախսերի

փոխհատուցման մեթոդիկան: Գործող մեթոդիկան հաստատվել է 2004 թվականին, որից հետո տեղի ունեցած ապրանքների և աշխատանքների շուկայական գների փոփոխությունները իրենց արտացոլումը չեն գտել նշված մեթոդիկայում: Փոփոխությունները հնարավորություն կտան սպառողներին բարձրացնել իրենց ցանցերի միջոցով մատակարարին կամ այլ սպառողներին հաղորդվող էլեկտրաէներգիայի հուսալիության մակարդակը:

Հանձնաժողովը 2010 թվականի ընթացքում իր մասնակցությունն է բերել ՀՀ կառավարության և պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակված մի շարք օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկման, համապատասխան փոփոխություններ ու լրացումներ ներկայացնելու աշխատանքներին: Հանրային ծառայությունների ոլորտի իրավական դաշտի կատարելագործման նպատակով 2011 թվականին կշարունակվի համագործակցությունը ՀՀ կառավարության և պետական կառավարման այլ մարմինների հետ:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում ևս 2011 թվականին կշարունակվեն կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները: 2010 թվականին, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման միջազգային միտումները և հանձնաժողովի հաստատած «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը», աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում արդար և բաց մրցակցության ապահովման, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության բարձրացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների շարժական կապի ցանցերի և ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի միջև միջօպերատորական փոխկապակցման ծառայությունները, ինչպես նաև տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների միջև տրաֆիկի փոխանակումը կանոնակարգող իրավական ակտերի ընդունումը,
- «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված

ցանցից դեպի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանց կատարվող զանգերի առավելագույն սակագների սահմանումը,

- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դասակարգմանը և շուկաների սահմանմանը միտված աշխատանքների իրականացումը:

Հիմք ընդունելով 2009 թվականի ավարտին «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, համաձայն որի ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխման, վերաձևակերպման) և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հավելվածով՝ կարգավորողի ներկայացմամբ, հանձնաժողովը, համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ, ՀՀ կառավարություն է ներկայացրել ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարները սահմանող «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելվածի նախագիծը: Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների չափերը 2011 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի առանձին հավելվածով սահմանվելուց հետո նշված վճարների մասով համապատասխան փոփոխություններ կկատարվեն հանձնաժողովի 2006 թվականի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ: Նույն հարցով 2011 թվականին ՀՀ կառավարություն կներկայացվի 2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի առանձին հավելվածի նախագիծը:

2011 թվականին քայլեր կձեռնարկվեն միջազգային IP տարանցման ծառայությունների շուկայում մրցակցության զարգացումը խթանելու և այլընտրանքային ուղիներ ապահովելու ուղղությամբ՝ այդ ծառայությունների մատուցման համար ստեղծելով նպաստավոր իրավական դաշտ, ինչը անմիջական ազդեցություն կունենա ինտերնետ ծառայությունների մատուցման որակի և մանրածախ վաճառքի սակագների վրա:

Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով 2011 թվա-

կանին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի լայնաշերտ (արագագործ) ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը, ինչի համար կիրականացվեն արագագործ ինտերնետային ծառայություններ մատուցելու հնարավորությունների մեծացմանը նպաստելուն ուղղված քայլեր՝ հատկապես հանրապետության մարզերում: Հանձնաժողովը կխրախուսի ընկերությունների բոլոր նախաձեռնությունները, որոնք կնպաստեն տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Այս կապակցությամբ կմշակվեն իրավական ակտեր, որոնք կնպաստեն ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագների իջեցմանը և լայնաշերտ (արագագործ) ինտերնետ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը:

2011 թվականին հանձնաժողովը իրավական ակտեր կընդունի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումների, ինչպես նաև օպերատորների ենթակառուցվածքների համատեղ օգտագործումը խթանող, այդ թվում Համաշխարհային բանկի զարգացման քաղաքականության 3-րդ վարկային ծրագրով նախատեսված գործողությունների շրջանակում հանրային ամրակցված հեռահաղորդակցության ցանցի ավանդական օպերատորի տրանսպորտային ենթակառուցվածքներն այլ օպերատորների կողմից օգտագործման սակագների և պայմանների կանոնակարգման վերաբերյալ:

2011 թվականի կշարունակվեն աշխատանքները բջջային կապի ցանցերում 3G ստանդարտի և LTE ցանցերի ներդրման ուղղությամբ, ինչը բջջային ցանցերի բաժանորդներին հնարավորություն կտա շատ բարձր արագագործություն ունեցող համակարգերի միջոցով ստանալ ծառայությունների ավելի մեծ տեսականի՝ տեղեկատվական հոսքերի հսկայական ծավալներով:

Հետևողական աշխատանքներ կիրականացվեն նաև էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում լիցենզավորման և ռադիոհաճախականությունների տրամադրման գործընթացների պարզեցման, ինչպես նաև հեռահաղորդակցության բնագավառում պարբերաբար ծագող խնդիրների լուծման նպատակով գործող իրավական դաշտի կկատարելագործման ուղղությամբ:

ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն, ջրային համակարգում սակագնային քաղաքականությունը և ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտա-

գործման թույլտվությունների տրամադրումն իրականացնում է հանձնաժողովը: Սակայն, հարկ է նշել, որ ջրային օրենսգրքում առկա թերություններն ու բացթողումները էապես խոչընդոտում են արդյունավետ և ամբողջական կարգավորման իրականացումը, մասնավորապես, ջրային համակարգում կարգավորող մարմնին վերապահված իրավասությունների չափից ավելի ընդհանուր և ոչ հստակ սահմանումը, ուղորտում սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման հիմնարար սկզբունքի ապահովման համար կարգավորող մարմնի անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը (ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների սահմանում), կարգավորվող անձանց գործունեության վերահսկման գործուն լծակների, ինչպես նաև վերջիններիս կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման դեպքերում տույժեր և տուգանքներ կիրառելու իրավասությունների բացակայությունը և այլն: Նշված թերությունների և բացթողումների վերացման նպատակով հանձնաժողովը բազմիցս հանդես է եկել համապատասխան առաջարկություններով և մասնակցել կազմակերպված քննարկումներին: Ելնելով այդ խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ 2011 թվականին կշարունակվեն ջրային համակարգում արդյունավետ և ամբողջական կարգավորում իրականացնելու համար անհրաժեշտ օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Փոստային կապի բնագավառում ԵՄ երկրների փորձի ուսումնասիրության նպատակով 2010 թվականի հոկտեմբեր ամսին Եվրոպական հարևանության և գործընկերության «TAIEX» ծրագրի շրջանակներում նախատեսվում է եվրոպական տարբեր երկրների փորձագետների մասնակցությամբ Երևան քաղաքում կազմակերպել աշխատանքային հանդիպում, որի ընթացքում կքննարկվեն փոստային կապի բնագավառում օրենսդրական դաշտի լրամշակման առաջնահերթությունները և կարգավորման բոլոր գործիքները (գործունեության լիցենզավորում, սակագնային կարգավորում, վերահսկողություն և այլն) պետական մեկ մարմնի կողմից իրականացնելու հնարավորությունը: 2011 թվականին հանձնաժողովը կշարունակի մասնակցել փոստային կապի բնագավառում իրավական դաշտի կատարելագործման աշխատանքներին:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովը սակագնային քաղաքականությունն իրականացնում է էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի, երկաթուղային տրանսպորտի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գնության անցկացման բնագավառներում և ջրային համակարգում: Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

2010 թվականի հունվար ամսին **«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները** հայտեր են ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բաշխման և փոխադրման սակագները: Հաշվի առնելով 2010 թվականի ապրիլի 1-ից հանրապետություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կտրուկ բարձրացումը, բնական գազի սպառման ծավալների նվազումը, 2009 թվականին գազամատակարարման համակարգում իրականացված ներդրումները և գազամատակարարման համակարգի ընդլայնման հետ կապված շահագործման և պահպանման ծախսերի փոփոխությունները, հանձնաժողովը վերանայել և սահմանել է սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, փոխադրման և բաշխման նոր սակագներ:

Քննարկումներ են կազմակերպվել բնական գազի գործող սակագնային կառուցվածքի կատարելագործման ուղղությամբ, որոնք կշարունակվեն նաև 2011 թվականին՝ զուգահեռ վերլուծելով և գնահատելով սպառողական տարբեր խմբերի տնտեսական գործունեության վրա այդ փոփոխությունների ազդեցությունը, ինչպես նաև մատակարար ընկերության տեխնիկական հնարավորությունները և ռիսկերը:

Հիմք ընդունելով «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական և «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերություններին վաճառվող բնական գազի նոր սակագինը, 2010 թվականի էլեկտրական էներգիայի

արտադրության ու սպառման կանխատեսումները, 2010 թվականի պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, 2009 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոնները, հանձնաժողովը 2010 թվականի ապրիլի 1-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից առաքվող ջերմային էներգիայի սակագները, ինչպես նաև օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության տեղակայանքներից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը:

Բնական գազի սակագները վերանայելիս հնարավոր եղավ խուսափել վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի բարձրացումից՝ հիմնականում շնորհիվ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կառուցած շոգեգազային համակցված ցիկլով աշխատող բարձր արդյունավետությամբ նոր էներգաբլոկից ներքին շուկա էժան էլեկտրաէներգիայի առաքման:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող 94 հիդրոէլեկտրակայաններից 29-ի սակագները հաշվարկվում են՝ ելնելով համապատասխան մեթոդիկայով ամրագրված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից: Հաշվի առնելով հիշյալ հիդրոէլեկտրակայանների սեփականատերերի կողմից վերջին ժամանակներում բարձրացված հարցերը՝ սակագնի տարր կազմող որոշ ծախսային հոդվածների անբավարար լինելու վերաբերյալ, հանձնաժողովն ուսումնասիրել և համապատասխան փոփոխություններ է կատարել սակագների հաշվարկման մեթոդիկայում՝ հնարավորություն ընձեռնելով նշված փոքր հիդրոէլեկտրակայաններին ցանկության դեպքում սակագների հաշվարկային մեթոդից անցնելու հաստատուն սակագների

մեթոդին:

Մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

«Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունները 2009 թվականի օգոստոսի 1-ից հավատարմագրային կառավարման են հանձնվել միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ», «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումին: 2010 թվականի հունվար ամսին նշված ընկերությունները հանձնաժողով են ներկայացրել սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտեր: «Նոր Ակունք» ընկերության սակագինը 2004 թվականից ի վեր չէր վերանայվել, իսկ «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ընկերությունների սակագները՝ 2005 թվականից ի վեր, մինչդեռ այդ տարիների ընթացքում տեղի են ունեցել էլեկտրական էներգիայի սակագնի 20% աճ, ջրի սպառման նվազում՝ պայմանավորված ընկերություններում ջրաչափերի տեղադրմամբ և հաշվառման համակարգի կատարելագործմամբ, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի փոփոխություններ: Հանձնաժողովը, հայտերի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, 2010 թվականի ապրիլի 1-ից վերանայել է նշված ընկերությունների կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

2010 թվականի փետրվար ամսին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ մանրաձախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Մանրաձախ ջրամատակարարման ծավալների հիմնավորման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքում 2009 թվականի մանրաձախ ջրամատակարարման փաստացի ծավալը հաշվարկներում ավելացվել է շուրջ 7.4 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի

ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 195 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը): Սակայն, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի գործող սակագներն անփոփոխ թողնելու նպատակով սուբսիդավորման վերաբերյալ առաջարկությունը, 2010 թվականի հուլիսի 8-ից վերահաստատվել են «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագները՝ գումարային 181 դրամ/խմ: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագներ:

«Երևան Ջուր» ՓԲԸ-ն առաջարկություն էր ներկայացրել նաև ընդլայնել իր կողմից մատուցվող ծառայությունների շրջանակները (բազմաբնակարան շենքերի ներքին ցանցերի, անհատական ջրաչափերի, մակերևութային ջրերի հեռացման համակարգի, ցայտաղբյուրների և հրշեջ հիդրատների պահպանում, ընթացիկ վերանորոգում և սպասարկում) և վարձակալության պայմանագրի հետագա 5 տարիների համար սահմանել նոր բազիսային սակագին, որն էլ կճշգրտվի միայն սղաճով, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխություններով պայմանավորված: Հանձնաժողովը, Երևանի քաղաքապետարանը և «Երևան Ջուր» ՓԲԸ-ն սկսել և 2011 թվականին կշարունակեն համատեղ քննարկումները՝ ընկերությանը լրացուցիչ ծառայությունների վերապահման և սակագնային քաղաքականության հարցերի հստակեցման ուղղությամբ:

2010 թվականի հունվար ամսին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքը մրցույթով վարձակալությամբ փոխանցելու ձևին, որի գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև հանձնաժողովը: 2011 թվականին

նախատեսվում է ավարտել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացը:

Հանձնաժողովը 2010 թվականի փետրվար ամսին համապատասխան որոշմամբ սահմանել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների շարժական կապի ցանցերի և ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները, որոնք մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը կիսամյակային պարբերականությամբ կնվազեն մինչև 42.5%-ի չափով:

2010 թվականի փետրվար և հունիս ամիսների որոշումներով հանձնաժողովը սահմանել է «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության և ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները, ինչպես նաև «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ամրակցված հեռախոսացանցի բաժանորդների համար՝ դեպի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորի ամրակցված կապի ցանց կատարվող զանգերի առավելագույն սակագները:

Վերոհիշյալ փոխկապակցման ծառայությունների վճարների և սակագների սահմանումը կապահովի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների մուտքը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ծառայությունների շուկա, կնպաստի մրցակցային միջավայրի զարգացմանը, ինչպես նաև կնվազեցնի բջջային և ամրակցված կապի ցանցերի բաժանորդներին մատուցվող ծառայությունների սակագները:

2009 թվականի հուլիսից հանձնաժողովի նախաձեռնությամբ սկսվեց մի գործընթաց, որն ուղղված էր Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ շուկայի զարգացմանը, ինչպես նաև մատուցվող ինտերնետ ծառայությունների մատչելիությանը և ողջամիտ սակագների կիրառմանը: Արդյունքում, 2009 թվականի նոյեմբեր ամսին հանձնաժողովի որոշմամբ սահմանվեց «ԱրմենՏել» փակ բաժնետիրական և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության 1 Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն

սակագնի հաշվարկման բանաձևը, որի համաձայն շուրջ 2 անգամ նվազեցին «ԱՅՓԻ» տարանցման ծառայության գործող սակագները:

Նշված գործընթացի արդյունքում արդեն իսկ նվազել են վերջնական սպառողներին ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագները, որոնք առկա մրցակցության պայմաններում կշարունակեն նվազել նաև 2011 թվականին:

Հարկ է նշել նաև, որ **փոստային կապի, երկաթուղային տրանսպորտի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության** անցկացման բնագավառների ընկերությունների և պետական մարմինների կողմից սակագնային հայտեր չեն ստացվել և սակագների փոփոխություններ տեղի չեն ունեցել:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով, մինչև ընթացիկ տարվա ավարտը նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2011 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալ-

ները:

2010 թվականի ընթացքում կրճատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայանների կողմից (բացառությամբ 10 ՄՎտ և ավելի տեղակայված հզորության հիդրոէլեկտրակայանների) հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվությունների ծավալները:

2011 թվականից նախատեսվում է կրճատել մինչև 10 ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական էներգիայի արտադրության և էներգետիկայի բնագավառում կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

Ներկայումս աշխատանքներ են տարվում նաև «Հայփոստ» ՓԲԸ-ի համար ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ, որոնք իրենց շարունակական զարգացումը կունենան 2011 թվականին: Այնուհետև նախատեսվում է լրամշակել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը և կրճատել ներկայացվող հաշվետվությունների ծավալները: «Հայփոստ» ՓԲԸ-ի համար կմշակվեն նաև հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվության ձևեր:

2011 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կկատարվի նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: 2011 թվականին կհրապարակվեն նաև գազամատակարարման բնագավառում կարգավորվող ընկերությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություններ, որոնք կկրեն շարունակական բնույթ:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորումը կարգավորման այն կարևոր գործառույթներից է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ:

2010 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը **Էներգետիկայի բնագավառում** տրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 12, ջերմաէլեկտրակայանի կառուցման՝ 1, համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության՝ 1, փոքր ՀԷԿ-երում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 13 լիցենզիա: Միաժամանակ, երկարաձգվել են նախկինում տրամադրված 15 լիցենզիաների գործողության ժամկետները, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվել 1 լիցենզիա, համաձայնություն է տրվել բաժնեմասերը վաճառելու՝ 5, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելու/օտարելու՝ 10, լիցենզիան վերաձևակերպելու 1 դիմումների:

Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել են տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 2 և ձայնային ծառայությունների մատուցման 5 լիցենզիաներ:

Կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը կշարունակվի նաև 2011 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերություններն ապահովում են **ՀՀ պետական բյուջեի** զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու

համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2010 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարները կկազմեն շուրջ 5,6 մլրդ դրամ (ներառյալ նախորդ տարիներին ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց պարտքերից մուտքերը), որի հիմնական մասը՝ շուրջ 4,9 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների, 2011 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 5,4 մլրդ դրամ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

Կենցաղային նպատակներով բնական գազի **սպառողների ներտնային գազասպառման համակարգերի** շահագործման անվտանգության մակարդակը գնահատելու նպատակով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ում իրականացվել են սպառողների գազասպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների ընթացքում հարցումներ են իրականացվել Հայաստանի ողջ տարածքում՝ շուրջ 1000 սպառողների մոտ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա լրամշակվել է բնական գազի սպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման համաձայնագիրը, ինչպես նաև ընկերությանն առաջարկվել է վերացնել աշխատանքների կազմակերպման ընթացքում տեղ գտած թերացումները: Համաձայնագրի լրամշակման արդյունքում հստակեցվել են ներտնային սպասարկման աշխատանքների իրականացման ժամկետները, իսկ դրանց խախտման համար նախատեսվել են տույժեր: 2011 թվականին նախատեսվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ում կրկին իրականացնել սպառողների գազասպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություններ:

Հանձնաժողովը հետևողական քայլեր է ձեռնարկում նաև **ջրամատակարարման ոլորտում** գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: 2010 թվականին հանձնաժողովը «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներում իրականացրել է ընկե-

րությունների կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության և հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության համապատասխանության ուսումնասիրություններ: 2011 թվականին նախատեսվում է նման ուսումնասիրություններ իրականացնել նաև «Նոր Ակունք» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ներում: Նշված ուսումնասիրությունները թույլ կտան համակողմանիորեն գնահատել ընկերությունների կողմից մատուցվող ջրամատակարարման ծառայությունների որակը և քայլեր ձեռնարկել դրանք բարելավելու ուղղությամբ:

Հաշվի առնելով 2010 թվականի կատարած աշխատանքները և ուսումնասիրելով **Էլեկտրոնային հաղորդակցության** բնագավառի կարգավորման հարցում եվրոպական մի շարք երկրների առաջավոր փորձը, հանձնաժողովը նախատեսում է 2011 թվականի ընթացքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, շարունակել ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով.

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց մոտ պարբերաբար կիրականացվեն ուսումնասիրություններ (մոնիթորինգ)՝ պարզելու վերջիններիս գործունեության համապատասխանությունը հանձնաժողովի կողմից հաստատված իրավական ակտերի պահանջներին.
- պարբերաբար ուսումնասիրություններ կկատարվեն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող ընկերություններում՝ հանձնաժողով ներկայացված տեխնիկական նախագծերին ցանցերի համապատասխանությանը հետևելու համար.
- ուսումնասիրություններ կկատարվեն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում համընդհանուր (ունիվերսալ) ծառայությունների ներդրման, այդ թվում համընդհանուր ծառայությունների հիմնադրամ ստեղծելու ուղղությամբ, որը կնպաստի հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ոլորտում բնակչության հիմնական կարիքների բավարարմանը և կապահովի այդ ծառայությունների մատչելիությունն ու պատշաճ որակը.
- պարբերաբար հետազոտություններ կանցկացվեն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում արդեն գոյություն

ունեցող էլեկտրոնային հաղորդակցության շուկայում՝ մրցակցության իրավիճակը գնահատելու և հնարավոր հակամրցակցային երևույթները բացահայտելու նպատակով:

4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

2011 թվականին հանձնաժողովը կշարունակի էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության կենթարկվեն ընկերությունների 2010 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կիրառարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Կշարունակվեն նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկողության աշխատանքները:

Սակագների վրա ներդրումների ազդեցությունը հավասարակշռելու նպատակով հանձնաժողովը զգալիորեն նվազեցրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2010 թվականի համար համաձայնեցված ներդրումային ծրագրի ծավալը: 2011 թվականին կշարունակվեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացում գնահատման չափանիշների կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Հանձնաժողովն այժմ ջանքեր է գործադրում սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու համար: Դրանց մակարդակի ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու ներդրումները: Ներկայումս սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջնահերթ նպատակաուղղել առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Հարկ է նշել նաև, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը,

սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում: Այստեղ հրապարակվում են նաև ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

2011 թվականին հանձնաժողովը կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2012-2014 թվականների ներդրումային ծրագիրը, նույն ժամանակահատվածի համար կսահմանի սպասարկման որակի ցուցանիշների նոր ծրագրային մեծություններ, ինչպես նաև կամփոփի ընկերության 2010 թվականի ներդրումային գործունեության արդյունքները՝ հաշվի առնելով նաև հանրապետության մարզերի և Երևան քաղաքի համար սահմանված սպասարկման որակի ծրագրային և փաստացի ցուցանիշները: Հանձնաժողովը կշարունակի նաև իր վեբ կայքում հրապարակել սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվության և ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ նյութերը:

2011 թվականին կշարունակվի նաև «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը: Միաժամանակ կկիրառվեն ներդրումների առանձին ուղղությունների գնահատման արդյունավետության չափանիշներ: Հանձնաժողովը կամփոփի նաև ընկերության 2010 թվականի ներդրումային գործունեության արդյունքները՝ իր վեբ կայքում հրապարակելով համապատասխան վերլուծական տեղեկանք:

Հանձնաժողովը հաշվի առնելով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության շարունակական կատարելագործման և թափանցիկության բարձրացման անհրաժեշտությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊ և «ՀրազԶԷԿ» ԲԲ ընկերությունների համար սահմանել է գնումների իրականացման սկզբունքներ: Այդ սկզբունքներին համապատասխան՝ հիշյալ ընկերությունները սահմանել են իրենց գնումների կարգերը, որոնց համաձայն և իրականացվում են լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ բոլոր գնումները: 2010 թվականին հանձնաժողովը մասնակցել է գնումների մասին նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, որով կկարգավորվեն նաև հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող

ընկերությունների կողմից իրականացվող գնումները: Նշված օրենքի ընդունումից հետո 2011 թվականին հանձնաժողովը կսահմանի հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների ցանկը և միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ գնումների իրականացման սկզբունքները:

Հանձնաժողովը շարունակական աշխատանքներ է տանում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ: Յուրաքանչյուր տարի «Հայջրմուղկոյուղի», «Երևան Ջուր», «Նոր Ակունք» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեկգրի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեկգրի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Հստակցվել են նաև ջրամատակարարման գրաֆիկների հրապարակման պահանջները և դրանց հանրային իրազեկման մեխանիզմները: 2010 թվականի հունվար ամսից նշված ընկերությունները իրենց սպասարկման տարածքի բոլոր սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացնում են նաև տվյալ սպառողի հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը: Միննույն ժամանակ, մինչև տարեվերջ, համանման պահանջներ կառաջադրվեն նաև «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներին:

2011 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված հինգ ընկերությունների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2012 թվականի ծրագրային մեծությունները:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն տեմպերի մասին: 2010 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 94 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 65-ը գտնվում են կառուցման փուլում: Այժմ գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 123 ՄՎտ,

որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 383 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 134 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 508 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետությունում կգործեն 159 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 257 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 891 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2010 թվականին, մինչև սեպտեմբերի 1-ը լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ դրանց համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերը չներկայացնելու համար հանձնաժողովը կայացրել է 13 որոշում՝ 12 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2011 թվականին հանձնաժողովը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացման տեմպերն պահպանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց պարտավորությունները պատշաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան տույժեր:

5. Մպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

Զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքը 2011 թվականին միտված կլինի հանձնաժողովի գործունեության ռազմավարությունն ու ընթացիկ խնդիրները ԶԼՄ-ների միջոցով հանրությանը պատշաճ ներկայացնելուն: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատանքը, հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Սահմանված կարգով և ժամկետներում

պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ լրատվամիջոցների համար, կտրվեն մամլո հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների և հանձնաժողովի գործունեության մասին պաշտոնական տեղեկատվությունները կհրապարակվեն մամուլում, էլեկտրոնային լրատվամիջոցներով և փոստով: Ինչպես նախորդ տարիներին, 2011-ին նույնպես, տեղեկատվության տարածումն ընդգրկելու է հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հասարակական հնչեղություն ունեցող որոշումների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Հանձնաժողովը գալիք տարում կշարունակի կատարելագործել իր ինտերնետային կայքը, որը, էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխության ժամանակ, արժանացել է առաջին կարգի մրցանակի: Կարևորելով համացանցից լուրեր, տեղեկություններ պատրաստող և տարածող էլեկտրոնային ՁԼՄ-ների դերը՝ հանձնաժողովը սերտորեն կհամագործակցի այդ կազմակերպությունների հետ՝ թողարկվող լուրերի հավաստիությունը մեկ անգամ ևս ճշտելու, հանրությանը ապատեղեկատվությունից զերծ պահելու նպատակով:

Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

Հանձնաժողովը 2010 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 98 գրավոր բողոք, իսկ «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 345 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված բոլոր խնդիրներին տրվել է համապատասխան ընթացք և լիարժեք պարզաբանում:

Հանրության հետ հետադարձ կապի ապահովման նպատակով նախատեսվում է կարգավորվող անձանց հետ համատեղ, հասարակական կազմակերպությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ կազմակերպել սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Հանձնաժողովը 2011 թվականին կշարունակի անհրաժեշտ քայլեր ձեռնարկել սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

6. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով հանձնաժողովը ակտիվորեն կհամագործակցի միջազգային կազմակերպությունների՝ մասնավորապես Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Հեռահաղորդակցության միջազգային միության և Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ: Ընդ որում վերջինիս հետ համագործակցությունը ուղղված է լինելու հանձնաժողովի և այլ շահագրգիռ կառույցների մասնագիտական կարողությունների բարելավմանը, ինչպես նաև ԵՄ անդամ պետություններում ընդունված կարգավորիչ օրենսդրության և պրակտիկայի ինտեգրմանը հայաստանյան միջավայրում: 2011 թվականի ընթացքում հանձնաժողովն աշխատանքներ կտանի էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորող համակարգի բարեփոխման և այն ԵՄ անդամ երկրներում գործող կարգավորող համակարգին համապատասխանեցնելու ուղղությամբ:

2011 թվականին նախատեսվում է շարունակել հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Բացի այդ, ԱՄՆ-ի կարգավորողների ընկերակցության և Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Այովա նահանգի կարգավորող մարմնի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև 2010 թվականի հունիս ամսին կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում է 2011 թվականին փոխադարձ այցելությունների միջոցով ուսումնասիրել երկու երկրների կարգավորման փորձը:

7. Էլեկտրական էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում

Վերլուծելով 2009 թվականի տարեկան և 2010 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշներն ու ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական էներգիայի և բնական գազի 2010 թվականին սպասվող և 2011 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2010 թվականի համեմատությամբ 2011 թվականին նկատվում է արտադրվող էլեկտրական էներգիայի աճ շուրջ 23%-ով, որը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև կնքված գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի շրջանակներում Իրան հաղորդվող էլեկտրաէներգիայի ծավալով. Այն 2011 թվականին կանխատեսվում է 2.4 մլրդ կՎտժ՝ 2010 թվականին սպասվող 925 մլն կՎտժ-ի փոխարեն: 2011 թվականին նախատեսվում է Հրազդանի 5-րդ էներգաբլոկի թողարկումը, որը, ինչպես և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը, կաշխատի վերը նշված գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի շրջանակներում:

2011 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 32.0% (2010-ին՝ 39.11%), ջերմային էլեկտրակայանների՝ 41.5% (2010-ին՝ 21.25%), հիդրոէլեկտրակայանների՝ 25.96% (2010-ին՝ 39.21%), հողմային էլեկտրակայանին՝ 0.04% (2010-ին՝ 0.04%), կոգեներացիոն կայաններին՝ 0.47% (2010-ին՝ 0.35%) և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանին՝ 0.03% (2010-ին՝ 0.04%):

2010 թվականի համեմատությամբ 2011 թվականին նախատեսվում է էլեկտրական էներգիայի արտահանման աճ շուրջ 2.6 անգամ:

Երկրորդ աղյուսակում տրված են բնական գազի 2010 թվականին սպասվող և 2011 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները: Ըստ կանխատեսման, 2010 թվականի համեմատությամբ 2011 թվականին սպառողներին առաքվող բնական գազի ընդհանուր ծավալը կաճի շուրջ 25.5%-ով, ինչը պայմանավորված է գազ՝ էլեկտրա-

Էներգիայի դիմաց պայմանագրի շրջանակներում Իրանից ներկրվող բնական գազի ծավալի շուրջ 3.2 անգամ աճով:

Աղյուսակ №1

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2010-2011 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2010 թ. սպասվող	2011 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն, այդ թվում՝	մլն կՎտժ	6348.0	7805.1
1.1	ՀԱԷԿ	մլն կՎտժ	2482.7	2496
1.2	ՀԷԿ-եր, որից՝	մլն կՎտժ	2489.2	2026
1.2.1	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	մլն կՎտժ	678.5	500
1.2.2	«Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ	մլն կՎտժ	1278.2	1001
1.2.3	«ՁորաՀԷԿ» ՓԲԸ	մլն կՎտժ	112.7	80
1.2.4	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	մլն կՎտժ	419.8	445
1.3	«Լոռի-1» հողմային էլեկտրակայան	մլն կՎտժ	2.8	2.9
1.4	«Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայան	մլն կՎտժ	2.5	2.5
1.5	Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) կայաններ	մլն կՎտժ	22.0	37
1.6	ՋԷԿ –եր, այդ թվում՝	մլն կՎտժ	1348.8	3240.8
1.6.1	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	մլն կՎտժ	238.6	0
1.6.2	«Հրազդան-5» էներգաբլոկ	մլն կՎտժ	0	1640.7
1.6.3	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, ընդամենը	մլն կՎտժ	1110.2	1600.1
1.6.3.1	որից՝ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկ	մլն կՎտժ	1036.8	1600.1
2	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն կՎտժ	328.2	421
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	5.2%	5.4%
3	Առաքում կայաններից	մլն կՎտժ	6019.8	7384.4
3.1	այդ թվում՝ էլեկտրակայաններից, որոնցից առաքված էլեկտրաէներգիան մուտք չի գործում բարձր լարման ցանցեր	մլն կՎտժ	436.4	476.2
4	Ներհոսք	մլն կՎտժ	261.0	186.5
5	Ընդամենը մուտք բարձր լարման ցանցեր (տող3-տող3.1+ տող4)	մլն կՎտժ	5844.4	7094.7

6	Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում	մլն կՎտժ	85.6	88.6
6.1	Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ	%	1.46%	1.2%
7	Արտահոսք	մլն կՎտժ	924.6	2403
8	Ընդամենը մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (տող3+տող4- տող7)	մլն կՎտժ	5270.6	5079.2
8.1	որից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար	մլն կՎտժ	62.8	148
8.2	ներքին շուկայում սպառման համար	մլն կՎտժ	5207.8	4931.2
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	մլն կՎտժ	671.8	631.2
9.1	Նույնը՝ %-ով տող 8.2-ի նկատմամբ	%	12.9%	12.8%
10	Ներքին սպառում	մլն կՎտժ	4536	4300

Աղյուսակ №2

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2010-2011 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՄ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2010 թ. սպասվող	2011 թ. կանխատեսվող
1	Բնական գազի ներկրում, այդ թվում՝	մլն խմ	1724.4	2137.3
1.1	Ռուսաստանի Դաշնությունից	մլն խմ	1474.9	1336.3
1.2	Իրանի Իսլամական Հանրապետությունից	մլն խմ	249.5	801.0
2	Տեխնոլոգիական կորուստները գազամատակարարման համակարգում	մլն խմ	138.0	141.0
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	8.0%	6.6%
3	Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն խմ	8.0	11.0
3.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	0.5%	0.5%
4	ԳՄՊԿ և գազատարներ մղված (վերցված) գազի ծավալների սաղոմ	մլն խմ	0	5.0
5	Բնական գազի առաքումը սպառողներին	մլն խմ	1578.4	1980.3
5.1	որից՝ ջերմային էլեկտրակայաններ	մլն խմ	360.4	783.3
5.2	Արդյունաբերություն	մլն խմ	257	240.0
5.3	բյուջետային կազմակերպություններ	մլն խմ	32	32.0
5.4	Բնակչություն	մլն խմ	495	495.0
5.5	կենտրոնացված ջեռուցման համակարգ	մլն խմ	0.0	0.0
5.6	այլ սպառողներ	մլն խմ	434.0	430.0